

մկրտութեան եւ զգեստները կը բռնէին, եւ երբ ան ջրէն դուրս կ'ելլէր զգեստները փոխուած էին բորբոքեալ կրակի շեղջի մը (L. V. C. էջ 136):

Արգուլֆ եպիսկոպոս կը յիշէ ուրիշ աւանդութիւն մը, որուն համաձայն եկեղեցի մը շինուած էր այն տեղւոյն վրայ ուր Յիսուս իր զգեստները զրաւ մկըրտութեան ժամանակ (Has. Բ. էջ 581):

բ) Յորդանանու սասներկու ֆարերը կամ հաւասոյ հիւրը. — Գրիգոր վրդ. Տաթեւացին իր Քարոզգրքին մէջ կը գրէ. «Ինչպէս որ Յեսու տասներկու մարդեր ընտրեց որ Յորդանանէն տասներկու քարեր հանեցին և ցամաքի վրայ դրին, նոյնպէս Քրիստոս ընտրեց տասներկու առաքեալներ, որ էին տասներկու քարեր, այսինքն պատուական աղունք, որ են հիմը հաւատոյ, զոր հանեն Յորդանանէ, այսինքն մկրտութենէ»: Առաջին քարը Պետրոս հանեց ըսելով՝ «հաւատամք ի մի Աստուած հայրն ամենակալ, յարարողն երկնի եւ երկրի». երկրորդը՝ Յովհաննէս. «և ի մի տէր Յիսուս Քրիստոս որդին Աստուծոյ». երրորդը՝ Յակոբոս. «յղացաւ ի Հոգւոյն և ծնաւ ի Մարեմայ սրբոյ կուսէն». չորրորդը՝ Անդրէաս. «չարչարեալ, խաչեալ, մեռեալ և թաղեալ». հինգերորդը՝ Թովմաս. «իջեալ ի դժոխս». վեցերորդը՝ Բարզուղիմէոս. «յերրորդ աւուր յարուցեալ». եօթներորդը՝ Փիլիպպոս. «ելեալ յերկինս եւ նստաւ ընդ աջմէ Հօր». ութերորդը՝ Մատթէոս. «զալոց է ի գատիլ զկենդանիս և զմեռեալս». իններորդը՝ Յակոբոս Ալփեայ, «հաւատամք և ի Ս. Հոգին». տասներորդը՝ Սիմոն. «և Ս. կաթուղիկէ եկեղեցի սրբոց հաղորդութեամբ». մետասաներորդը՝ Թադէոս. «և ի թողութիւն մեղաց». երկուտասաներորդը՝ Մատթիա. «ի